ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ **ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Խաչատուր Բալասանյանը, Հովհաննես Գասպարյանը, Արտյոմ Գեվորգյանը, Սոֆիա Խաչատրյանը, Էմմա Մարգարյանը, Գոռ Մեծոյանը, Վարդան Պապյանը, Ներսես Պետրոսյանը, Նարեկ Ստեփանյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գրիգոր Հալլաբյան, Ստելլա Բադալյան, Խոսրով Թարվերդյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 140-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, « Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է.

1.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի <Նոր Հաճըն համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին> N 140-
Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշմամբ հաստատված NN 2, 3 և 6 հավելվածներում կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14[3] հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1/փ-353 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Արտավազդ Աշոտի Երիցյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան Արտավազդ Աշոտի Երիցյանի սեփականություն հանդիսացող 07-064-0003-0005 կադաստրային ծածկագրով 0,12495 հա գյուղատնտեսական նշանակության խաղող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը վճարելուց հետո:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 27-ի թիվ 1/փ-108 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Բենիամին Տիգրանի Ֆրունջյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան Բենիամին Տիգրանի Ֆրունջյանի սեփականություն հանդիսացող 07-064-0003-0007 կադաստրային ծածկագրով 0,12495 հա գյուղատնտեսական նշանակության խաղող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը վճարելուց հետո:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 25-ի թիվ 1/փ-105 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի.Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Արսեն Համլետի Համբարձումյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան Արսեն Համլետի Համբարձումյանի սեփականություն հանդիսացող 07-064-0003-0006 կադաստրային ծածկագրով 0,12495 հա գյուղատնտեսական նշանակության խաղող հողամասի

նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը վճարելուց հետո:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Համաձայն հողային օրենսգրքի 67- րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21- րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող հողատեսքերը 2023 թվականի ընթացքում աճուրդ- վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները ՝ համաձայն հավելվածի (հավելվածը կցվում է) :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին
<< ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀՈԱԿ – Ի ԴԱՀԼԻՃԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը << Նոր Հաճըն համայնքապետարանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ – ի դահլիճը օգտագործման

իրավունքով 5 տարի ժամկետով՝որից 18 ամիսը անհատույց, տրամադրել «Սինեմա Պլյուս» ՍՊԸ ին համապատասխան գործունեություն իրականացնելու համար:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին «Սինեմա Պլյուս» ՍՊԸ- ի հետ կնքել գույքի օգտագործման տրամադրելու վերաբերյալ պայմանագիր՝համաձայն պայմանների:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99_Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 121-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34 –րդ հոդվածների պահանջներով, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի << 2023 թվականի տեղական վճարի գծով արտոնություններ սահմանելու մասին » N 124- Ա որոշման 1 կետի 3 – րդ ենթակետում ավելացնել (ե) պարբերությունը ՝ հետևյալ խմբագրությամբ՝ <<Արցախից տեղահանված ընտանիքի երեխա է>>

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի նոյեմբերի 01-ից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100_Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Նոր Հաճըն համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի նոյեմբերի 22 -ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Ավագանու անդամներ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՌՈՄԱՆ ԱՎԴԱԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱՐԱՄՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ՍԱՀԱԿ ԳՅՈՒԼԻՆՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արման Սմբատյանը

_____